ACBA-CREDIT AGRICOLE BANK

27 նոյեմբերի 2015թ. Թիվ 01-1152

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ) ուղղված 20.11.2015թ.-ի թիվ 265-ի 5 հարցման՝ հարկ ենք համարում տեղեկացնել Ձեզ, որ «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված է հետևյալ կարգավորումը.

«Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա»:

Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերը նշված օրենքի գործողությունը չի տարածվում Բանկի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը Բանկի համար հանդիսանում է առևտրային գաղտնիք՝ Բանկը մերժում է Ձեր խնդրանքը:

Հարգանքով

Գործառնական կառավարման ղեկ.
գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Նիկոլայ Հովհաննիսյան

Կատարող՝
Իրավաբանական վարչության իրավաբան՝ Նարեկ Անտոնյան
(37410) 31-88-88 (8129)

0009, Երևան, Բայրոնի 1 Հեռախոս. (374-10) 31-88-88, Հեռապատճեն. (374-10) 54-34-85 Էլ.-փոստ՝ acba@acba.am http:// www.acba.am
0009, 1 Byron street, Yerevan Phone: (374-10) 31-88-88, Fax : (374-10) 54-34-85 E-mail: acba@acba.am http:// www.acba.am